

Ուսուցչական մասը առանձին է հրատարակված.

ՆՈՐ == ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

Հեղինակություն

ՍԵՂՐԱՐ ՄԱՆԴԻՆԵԱՆԻ

ԱԾԱԿԵՐՏԱԿԱՆ

ԳՐՈՒԹԵԱՆ տետր

եի

ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԵԱՆ մատենիկ

491.99-8
Մ-25

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ԿՈՈՂՏՈՒՐԱ» Էջկ. | Типогр. Т-ва «Культура»

Вольяминовская ул., № 18.

1909

7.9908

25

9002

8105 .80. # 5

ՎԵՀԱՓԱՌ


**Տէր Տէր ՄԱՏԹԷՈՍ երկրորդիկ
Ամենայն Հայոց ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ**

ԱՆՍԱՀՄԱՆ ՅԱՐԳԱՆՔՈՎ,

ՅՈՒՍՈՎ, և ՀԱՒԱՏՈՎ,

ՆՈՒՐՈՒԾ Է

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՂԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՀ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՍԵՐԻԱ 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

13551-8

ՅՈՒՐԱԿԱՆ ՏԵՂ

Այս գրքի ոգին և նիշտ գործածութիւնը հասկանալու համար, պէտք է կանխաւ կարդալ և ուսումնասիրել «Նոր Այրբենարանի» ուսուցչական մասը, որ հրատարակված է առանձին:

Այն տեղից իմանում ենք, որ գրագիտութեան հիմքը կազմում է խօսումն լեզուն, բանաւոր վարժութիւնը. գրութիւնը բնականօրէն բղխում է այդ վարժութիւններից, իսկ ինքն էլ այնուհետև հաստատուն հիմք է դառնում ընթերցանութեան արուեստի համար (մեր զբաղւոյններում սովորական ընթացքը հէնց հակառակն է կազմում): Որպէս զի աշակերտի ձեռքով գրածը ստեպ կարդալու դիւրութիւն ունենայ, հարկաւոր է աշակերտին հէնց սկզբից ընտելացնել մաքրութեան և փութաջանութեան: Գրել կամ կարդալ տալու ժամանակ, պէտք է տեսնումը տակի տողերը ծածկել տալ ծծուն թղթով կամ պահպանակով, որով գրութեան տեսքն ու ընթերցանութեան մատենիկը պաշտպանւած կը լինին և անզոյւշաբար չեն ծալծլիլ թեւերով: Տողերը ճարպոտ մատերով չմրոտելու համար, մանուկները պէտք է հարկաւոր տողերը ցոյց տան լուցկու կոթով կամ քարեգրչով: Փորձը ցոյց է տալիս, որ աշակերտները շուտ են ընտելանում այս կարգերին, եթէ իրանցից խստիւ պահանջվում է անփութութեան յաղթահարումը:

Լաւ կը լինի, որ հենց առաջին օրերից չգործածվի մեր գրութեան տետրը, քանի որ մանուկները դեռ ևս լուկ միայն խզբզում են, և ոչ թէ մաքուր գրում. այլ թող որ նոքա նախ և առաջ մի առանձին թերթի վրա փորձեն իրանց խզբզանքներն՝ ու բաւական չափով կանոնաւորեն սկսագրութիւնները, և ապա թէ հարկաւորը մաքուր արտագրեն այս տետրի մեջ: Ախայն այսպիսի հաստատուն սովորութեամբ աշակերտի համար իւր գրութեան տետրը կը դառնայ արդարեւ որպէս մի նուիրական սրբութիւն:

Սեդրաք Մանդինեան.

[illegible]

1 2 3 2



«է» բառեր
(«աէր» և ոչ որպէս «մեր»)

«յ» բառեր
(«յոյս» և ոչ որպէս «հաւատ»)

«ո» բառեր
(«տառ» և ոչ որպէս «տար»)

«Օ» բառեր
(«օր» և «ն» որպէս «նոր»)

Մ Ա Տ Ե Ն Ի Կ

1.

«Ա Ռ Ա Ի Օ Տ»

ԲԱՆԱԻՈՐ.

Լուսացան, լուսացան.

Լուսն է բարին.


Ծիտն է ծառին,

Հաւն է թառին:

Ծոյլ մարդու քունն է տարի.

Աշխատաւոր, վեր կաց բանի.

ԳՐԱԻՈՐ.



2.

«ԳԱԹԱՆ ՈՒ ՓԱԽԼԱԻԸ»

ԲԱՆԱԻՈՐ.


Ալիւրը մենք մաղեցինք,

Նայէ, գաթան ով կերաւ.

Խմորը մենք շաղեցինք,

Տես, փախլաւն ով կերաւ:

ԳՐԱԻՈՐ.



3.

«ՆԱԿԱՍՏԱԿ»

ԲԱՆԱԻՈՐ.

Նապաստակ,
Զորի վաստակ.
Քանի՞ վագես
Փորըդ դարդակ:

ԳՐԱԻՈՐ.

ճ ղ ճ ի ճ ի

4.

«ԱՅՍՈՐ ԱՆՃԱՐ»

ԲԱՆԱԻՈՐ.


Այսօր անճար,
Վաղը բանջար.
Երկու հացին,
Մէկ դրացին.
Կատուն մեռաւ,
Վրան լացին:

ԳՐԱԻՈՐ.

(Աշակերտները պէտք է գրեն հետևեալ բառերի միայն ձայնատըները—այ, օ, ա, ա. ա, ւ
և այլն—և ոչ թէ ամբողջ բառերը).

«այս-օր», «ան-ճար», «վա-ղը», «բան-ջար»,

«եր-կու», «հո-ցին», «մէկ», «դը-րա-ցին», «կա-տուն», «մե-ռաւ», «վը-րան», «լա-ցին»:



(Հետևեալ բառերը 3 տեսակ պէտք է գրել տալ) «ծիտ», «ծառ», «մարդ», «մէկ», «ծոր», «փոր», «մենք», «տես», «լոյս», «ծոյլ», «հաւ», «քուն», «վեր», «կաց», «բան».

1. տեսակ—ի, ծի, ծիտ
ա, ծա, ծառ

և այլն

2. տեսակ—ծի, ծիտ
ծա, ծառ

և այլն

3. տեսակ—ծիտ
ծառ

և այլն:

5.

«ՏՌՈՒՋ ԶՈՒՏԵՐ»

ԲԱՆԱԻՈՐ.

Հօրէս եկաւ մէկ մէկ ուտի, վոյ, վոյ,
Աղուէսն եկաւ լանջիկ, լանջիկ, վոյ, վոյ,

Ոտեր ունէր կարճիկ, կարճիկ, վնւյ, վնւյ,
Սիրտը ուզեց հաւի քարճիկ, վնւյ, վնւյ:

Վնյ իմ չալիք-մալիք, չալմալալիք, չալ
պտորիկ, չալմապտիկ, տոշտահոտ, տմպլա-
ճակատ, խաշխատալիկ, տոզիկ ճուտեր:

(Գտնել տալ հետևեալ բառերի ձայնաւոր-
ները).

«հօրէս», «աղուէս», «ուտի», «եկաւ», «լանչիկ»,
«ոտեր», «կարճիկ», «սիրտը», «ուզեց», «հաւի»,
«քարճիկ», — «բարին», «ծառին», «թառին», «մար-
դու», «աշխատաւոր», «ալիւրը», «մաղեցինք»,
«նայէ», «գաթա», «կերաւ», «խմորը», «շաղե-
ցինք», «նապաստակ», «ձորի», «վաստակ», «քա-
նի», «վազես», «փորդ», «դարդակ», «այսօր»,
«անճար», «վաղը», «երկու», «հացին», «մէկ»,
«դրացին», «կատու», «մեռաւ», «վրան», «լացին»:

ԳՐԱԽՈՐ.

(Գրել վանկ վանկ).

ուտի, լանչիկ, սիրտը, գաթա, նապաստակ, քա-
նի, կատու, լացին.

(Նոյնպէս գրել, բայց տարակուսելի տառե-
րը ուսուցչից հարցնելով). հօրէս, աղուէս, ե-
կաւ, ոտեր, կարճիկ, սիրտը, ուզեց, հաւի, քար-
ճիկ, բարի, ծառին, թառին, մարդու, աշխատա-
ւոր, մաղեցինք, շաղեցինք, նայէ, ալիւրը, կե-
րաւ, խմորը, ձորի, վաստակ, վազես, փորդ,
դարդակ, այսօր, անճար, վաղը, երկու, հացին,
մէկ, դրացին, մեռաւ, վրան.

1) եկաւ

կերաւ

մեռաւ

հաւի

աշխատաւոր

2) հօրէս

աղուէս

մէկ

«հ» — հ, յ

«օ» — օ, ո

«վ» — վ, լ, ու

«է» — ե, է

«վօ» սկզբում — ո

«ր» — ր, ռ

«թ» թ, դ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ.

«հօրէս» | «կաւ» | «մեռաւ» | «հաւի» | «աշխատաւոր» |
«աղուէս» | «մէկ» | «հ» — հ, յ | «օ» — օ, ո | «վ» — վ, լ, ու |
«է» — ե, է | «վօ» սկզբում — ո | «ր» — ր, ռ | «թ» — թ, դ |

«Աղուէ/սի սիրտն ուզեց հա/ւի
միս»: «Ան/ճար — բան/ջար»: «Հա/ցին —

դրա/ցին»։ «Նա/պաս/տա/կի փո/րը դար/հա/կ է»։ «Ա/լիւ/րը մա/ղում են»։
*Խ/մո/րը շա/ղում են»։ «Ծոյլ ե/րե-
լսի քուն/ն է տա/րել»։

6.

ՄԵՂՐ ՈՒՏՈՂԻ ՀԵՔԻԱԹԸ

ԲԱՆԱՆՈՐ.

Ձիւնն եկաւ քուլայ քուլայ,
Պապն ասաց, դանէն ուր ա,
Գէլն ասաց, հրէս տարայ,
Շունն ասաց, հրէս բերի:

Պոչիկ թուլն,

Մեղրը կերար, պուլիկն ուր ա:

ԳՐԱՆՈՐ.

ա ո ո ո

ձ ճ

ա զ ո

ի ե կ ո թ

ւ լ ղ ճ

(Թեւադրել)

«Պապն ու թոռ»։ «Մեղր ու կարագ»։
«Գէլն ու շունը»։ «Մի պուլիկ մեղր»։ «Ո՞վ կե-
րաւ մեղրը»։

— Պապն, գէլն, շունն, հրէս:

Հաշել—յաջողութիւն: Հաշող շուն—յաջող
գործ: Այ, աջող, յաջող:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ.

Հաշաւն աւրաւ, *դն/գոյնն ա,

Վրդը բաւ լիւր *Թոյնն ա,

Շաւ/մա՛վ կուր աւ/րոյնն ա,

Լաւ լիւր բաւ պիւր աւ/րոյնն ա,

Ձիւն է գա/լիս փա/թիլ փա/թիլ,
Թուր/քը ա/սաց՝ *բա/նս փա/տ է,
Պա/ռաւն ասաց՝ մո/զիս կո/րաւ,
Գայլն ասաց՝ փո/րիս գեղ է:


7.

«Ա Ր Ե Ի»

ՔԱՆԱԽՈՐ:

Արե, արե, եկ, եկ,
Զիզի քարին վեր եկ.
Քու հէր, քու մէր եկել է,
Թուր ու թուանք բերել է,
Գոմշու ոտին տուել է,
Դուան տակին հորել է,
Մուկն եկել է, հանել է,
Կատուն եղնէն վազել է:

ԳԻՄՆԱԽՈՐ:



Քարին, արե, վեր, թուր, բերել, հորել, դու-
ան—դուան:

Տուել, թուանք:


Ոտին:

Եկ, եկել, բերել, տուել, հորել, հանել, եղ-
նէն, վազել:

Զիզի քար. քու հեր. գոմշու ոտ. դրուան
տակին—դուան տակին. եղնէն վազել:

Ծոյլ մարդ. մենք մաղեցինք. սով կերաւ. ձու-
րի վաստակ. երկու հաց. վրան լացին. հորէս ե-
կաւ. հաւի քարճիկ. տրուցիկ ճուտ—տուցիկ ճուտ:

ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԻՒՆ:



Ռ. Պաշկանով.

8.

«Կ Ա Տ Ո Ի»

ՔԱՆԱԽՈՐ:

Միօ, միօ,	— Զիր ու չամիչ:
Փիշօ, փիշօ,	Ո՞ւմ կը տանես:
Ո՞ւմ կատուն ես:	— Իմ ձագերուն:
— Աղաբէկի:	Փիշտան, կորի:
Ի՞նչ ես ուզում:	

ԳՐԱԽՈՐ.

Ո՛ւմ կատուն ես: Ի՞նչ կուզես: Ո՛ւմ կը տա-
նես: Ո՛վ կերաւ: Ի՞նչ փագես: Ի՞նչն ո՛ւր ա:
Պուլիկըս ո՛ւր ա: Պուլիկս ո՛ւր ա:

ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԻՒՆ.

Վրասն, Վրասն, *Քրասն,

Քաւրիւ Թողիւ, քաւրաւ Վան

Լիպան Թաթիւան ի կայն պաւ:

Ինչ որ աւելի, ասին աւելի:

Վրասն քիւսիս քաղի քաղի.

Վարր քաւրաւ քաւրաւ քաւրաւ

Պանն չր ի կայն կուլի Թան.

Եւ ի վրէ քաւրաւ քաւրաւ:

9.

«ՍԵՐՄԱՆՅԱՆ»

ԲԱՆԱԽՈՐ.

Օրհնալ Տէր մեր Յիսուս Բրիսուս.
Էս մէկ բուր անասուն ու բոլորն բաժին,
Էս մէկն էլ անձաւ աղբաթի, ձա՛մբորդ զոնաղի բաժին,
Էս էլ իմ ձրձկնեւի բաժին:

Դու ամօրալի չմեռ, Սասուած.
Դու իմ տուն ու դուռ շէն պահես,
Օրհնութիւն բաժին այս արթին. կանանչեցրու:
Ո՛վ Սասուած, բարով խերով փաղեմ:

ԳՐԱԽՈՐ.

Բուր, դուր, արտուր, ծառ, թառ, մե-
ռաւ:—Մէկ բուռ ցորենը: Իմ գաւաղները: Օրհ-
նիր աշխատանքս: Կանաչեցրու իմ արտը:

ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԻՒՆ.

Բայ Թաթիւ անթոթի: Դու եւս,

Եւս չի երգի քաւր, ասի քաւր Վան

Վաւ քաւր. որ բաւ ի ինչ քաւրաւ

Չեւրաւն, որ քաւր ի կայն ի կայն

ասի եւս, ի կայն քաւր աղբաթի

Դրան, ան քաւր ի կայն:

ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆ.

Արտագրել տալ ընթերցանութեան բառերը:

12.

«ՁՆՁՆՈՒԿ»

ԲԱՆԱՒՈՐ.

Կսուրը ցորեն փռեցի՝ չարցնելու համար,
Ճնձուղներն եկան ժողովան՝ ուտելու համար,
Քարը վեր կալայ խփեցի՝ սպանելու համար,
Ղասաթի դանակն ուզեցի՝ մարքելու համար,
Մեծ պղինձն ուզեցի՝ եփելու համար,
Ողջ քաղաքը մեծարեցի ուտելու համար:

Այ՛ ճնձուղիկ,
Կարմիր տոսիկ,
Սպիտակ փորիկ,
Ուտեն կոտիկ,
Խմեն ջրիկ,
Սուտի եզրիկ,
Պտտիկ մտտիկ:

ԳՐԱՒՈՐ.

Հարցական նախադասութիւններ.

Ո՞վ կերաւ:

Քանի՞ վազեաւ:

Պուլիկս ո՞ւր ա:

Ում կատուն ես:

Հրամայական նախադասութիւններ.

Վեր կայ բանի:

Ե՛կ, եկ:

Զիզի քարին վեր եկ:

Բայ երեսդ, արեգակ:

Փիշտան, կորի:

Զարկ, եզնակ:

Ճաշիկ, դու պաղի:

Հաստատական նախադասութիւններ.

Լուսացաւ:

Ծիտն է ծառին:

Կատուն մեռաւ:

Սիրար ուզեց հաւի քարճիկ:

Զիւնը եկաւ:

Մեղրով լիքը քթոցն ես:

Մէկ բուռ չամիչքեզ կը տանք:

Շերեփն իջաւ ճակատին:

ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԻՒՆ.

Ի՛շխ բարձած տանձ, *խնձոր,
Ես *գնա/ցի Գո/մա/ձոր:
Վե/րա/գար ձիւ մէ/կէլ՝օր
Ճամ/փին գար/կի մի մեծ լոր:
Էդ աժ/դա հա մեծ *ղշին
Մի կերպ բարձի իմ ի շին:
Ու/րախ ուրախ ե/կայ տուն,
*Կնունք՝ արի իմ որ դուն:
Էլ տիրացու, էլ տէրատէր,
Սա/նա/հէր՝ ու սանա մէր,
*Կնքա/հէր՝ ու կնքամէր,
Քեօխ/վա/կին՝ ու քեօխվամէր,
Դուռ՝ ու *գը/կեց, *խնամի—
Էլ ի՞նչ *թուեմ մի առ մի—
Եօթը հէրանք, եօթը մէրանք

Թափանք էզ լո՛րը կերանք.
Հըմա կերանք, հըմա կերանք:

Ա. ք. Խնկոյեան.

13.

«ԱՌԻԻԺԻ ԴԵՏԵՍԵՆԸ»

ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԻՒՆ.

Եղել է մէկ մարդ, շատ հա՛րուստ, ու/նետր: Նա ծուռ-մուռ ապ/րելով, ինչ ունէր չունէր կերաւ, *նստեց դատարկ: *Տնից հաց մաց *կ/տր վեցաւ. մէկ ձեռքը զրեց ծոցը, մէկ ձեռքը երեսին, չէր իմա-նում, թէ ինչ անի: Ախ վախ անելով՝ հալ/վում մաշ/վում էր:

Իա/րե կամ ներն եկան, *գլխին հա-ւաք/վեցան, և նոցանից ծերը առաւ ու ա-սաց. «դու մեղք ես գործել, քո գան/ձա/տու նը քե/զանից *խրա/նել փախել է. վեր կաց, *գնա քո գանձա տան ետև, գուցէ էլի *գտ/նես և ա/ռաջ ուայ պէս բախտաւոր/վես:

Մարդը *գլխի ընկաւ, վեր կացաւ սար ու քար ընկաւ, գիշեր ցերեկ իւր գան-ձա տունը *փնտրեց: Մի գիշեր երազում տեսաւ, որ իւր գանձատունը, բարձր սարի վրա, *գլուխը *ծռած, *նստած է, և նա էլ ախ ու վախ է անում: Զարթնե լիս այն սարի ճանա պարհը *բռնեց:

Ճանապարհին մի ա/ռիւծ տեսաւ: Ա-ռիւծը մարդուն կան/չեց հարց/րեց. «Ո՞ւր ես գնում»: Մարդն ա-սաց. «Փնում եմ *գանձատունս *գտնեմ»: Առիւծն ա-սաց. «Ես գիտեմ, որ քո գանձատունը շատ գի-տուն է. նորա/նից հարցրու, ես ինչո՞վ եմ հիւանդ, ահա եօթը տարի է չար չար/վում եմ»: Մարդը խօսք տուեց, գնաց:

Շատ գնաց, քիչ գնաց, տեսաւ մի այ-գի, որ հագար *ն/մուշ *պտղով լիքն էր. քանի քաղեց որ ուտի, տեսաւ որ լեղի են: Այգու տէրը *նշմա/րեց, այս մարդու վրա բարկացաւ, յետոյ հարց րեց. «Ո՞ւր ես գը-նում»: Մարդն իւր դարդը պատմեց այ-գու տիրոջ: «Դէ, թէ որ այգալէս է, քո գան-ձատնից հարցրու, *իմ այգու դարմանն ինչ է, որ ինչ անեմ չանեմ, պտուղները դառն են հասնում»: Մարդը խօսք տուեց, գնաց:

Գնաց, գնաց, հասաւ մէկ շէն-*շ/քեղ բեր գին. *մտաւ մէջը, տեսաւ որ մէկ ջա-հիլ աղջիկ պալատի մէջ ման է գալիս: Նա այս մարդուն հարց րեց. «Եղբայր, դու այս-տեղ ինչ բան ունիս». մարդն իւր գլխի ե-կածը պատմեց:

Աղջիկը դարձաւ ա-սաց նորան. «Ես շատ գանձ *հա ռս տու/թիւն ունիմ, շատ մալ ու ապրանք. բայց մի ցաւ ունիմ, որ գի-շեր ցերեկ փիշտ է *սրտիս: Թէ որ քո *գան-ձատնից ինձ համար մի ճար հարց նես,

ամենայն տեսակ բարութիւն կը տամ քեզ»։
Մարդը խօսք տուեց, գնաց։

Գնաց, և ահա տեսաւ, որ իւր գանձատունը սարի *գլխին *նստել է։ Բարեւ տուեց, նստեց. շատ գանգատ արեց, վերջը *ապրապրած բաների ճարը հարցրեց, ամէնի պատասխանն առաւ։

«Դէ, հիմի վեր կաց, գնանք», ասաց։

— Դու առաջ գնա, ես էլ կը գամ, ասաց գանձատունը։

Մարդը դարձաւ, առաջ այն աղջկան տեսաւ, ասաց. «Քո դեղնայն է, որ դու մէկ *կտրիճին ամուսնանաս, քո վիշտն ու ցաւը կանցնի»։

Եկաւ այգին, տիրոջը կանչեց, ասաց. «Որ առուից որ այգու ջուրը գալիս է, այն առուի մէջ ոսկու հանք կայ, ոսկու *փշրանքը *ջրի հետ գալիս է, ծառերը ծծում են, դառնանում են։ Կամ *ջրի առուն փոխիր, կամ հանքը փոխիր և դուրս հանիր, *պտուղները կանուշանան»։

Եկաւ առիւծի մօտ, նստեց մարդը, պատմեց իւր գանձատան հանդիպումը, այգու տիրոջ ու աղջկայ բաները։ Առիւծը հարցրեց. «Աղջիկը քեզ լաւութիւն չարեց»։ Մարդն ասաց. «Ինչպէս չէ, ասաց Արի, դու ինձ առ, նստենք մէկ տեղ *Աստծու բարութիւնը վայելենք։— Ես համաձայն չեղայ։ Միթէ ձեռք ու *ոտքս կապէի և մի

ծանր բեռի պէս աղջկայ հոգսն ու դճրդը քաշէի»։

Առիւծը հարցրեց. «Այգու տէրն ի՞նչ լաւութիւն արեց»։ Մարդն ասաց. «Այգու տէրը ոսկու հանքերը հանեց, կօլօլ ոսկի դառան, ինձ տուեց։ Ես չառայ, ասացի. Ո՞վ այդքան բան կը շալկէ և տուն կը տանէ»։

— Է՛, ասաց առիւծը, ինձ համար ի՞նչ դեղ ասաց։ Մարդը պատասխանեց. «Քեզ համար էլ ասաց, որ եթէ մէկ անխելք մարդու գլուխն ուտես, կը լաւանաս»։

Առիւծը սորա ասածները օրինաւոր կերպով վեր դիր արեց, թաթը պարզեց, մարդու գլուխը *բռնեց, գետնով տուեց, *փշրեց կերաւ։ Ասաց. «Ես իմ Աստուած, քեզանից էլ անխելք մարդ այս աշխարհում չեմ գտնի»։

— Դ զ Բ տ գ ջ ձ —

ԳՐԱԽՈՐ.

Մարդ, եղբայր, ախպէր, բարձր, դարձաւ, գտնեմ, այգի, աղջիկ, առաջ, տիրոջ։

Բար/ութիւն, լաւ/ութիւն, դառն/ութիւն, ան/խելք/ութիւն, տխր/ութիւն, բն/ութիւն, հարստ/ութիւն, մարդ/ութիւն, անուշ/ութիւն, համ/աձայն/ութիւն, բա/րե/կամ/ութիւն, ծեր/ութիւն, բռն/ութիւն, եղել/ութիւն։

Բով/անդակ, այլ/անդակ, օժ/անդակ, կարկ/անդակ, ասպ/անդակ, սուրհ/անդակ, բարձրաւ/անդակ,

անդակ, սարաւ/անդակ,—քանդակ, վանդակ,
բանդակ, Մ/անդակ/ունի:

Բեռն, բեռն/աւոր, բեռն/աւոր/ութիւն.
ահ/աւոր/ութիւն, ուխտ/աւոր/ութիւն, շնորհ/
աւոր/ութիւն, բախտ/աւոր/ութիւն, մա/աւոր/ու-
թիւն, թագ/աւոր/ութիւն, մեղ/աւոր/ութիւն,
բռն/աւոր/ութիւն, փառ/աւոր/ութիւն:

Մէկ ստորակէտ, մէկ էլ վերջակէտ:

Ծոյլը սիրում է ուտել՝ չի սիրում աշխատել:
Սիրում է ուտել, քայլ ոչ աշխատել:
Ուտեմ տիտեմ, նուենում նանամ:
Ով տուն չի շինել, աները բանովի գիտէ:
Խօսքը հարստութիւնը չէ, խօսքը կառավարելն է:
Խօսքը հարստութիւնը չէ, ալլ կառավարելը:

Դու աստ, գնտ, արտ, կարդտ, խադտ.
Նա կարդայ, զղջայ, հարստանայ, հաստանայ:

14.

«ՔՐԳՅԸ ՄԱՐԳՈՒ ՀՆՆԸՔՆԵՐԸ»

ԲԱՆԱՒՈՐ.

Բարեկամներ մեր քէֆ հարցուցին,
Քէֆ չկար, տղերքը նստան, տխրեցին:
Ալիւր չունէին, որ խմոր հունցէին,
Հաց չունէին, գնացին թոնիր վառեցին:
Է՛, պէտք է ցանէինք, որ ցորեն հասցնէինք.
Գնացինք, դուռ ու դրկեց ժողովեցինք,
Երկաթ գտանք, մի խօփ շինեցինք:

Էն խօփով մի հերկ շրջեցինք:
Թէ Աստուած ուզեց՝ ցորեն կունենանք
Յորնի աբով մի ամբար շինեցինք:
Մկներն իմացան, ամբարը ծակեցին,
Միջի եղած չեղածը խտակ կրծոտեցին:
Թէ դարդակ էինք, էլի դարդակ նստեցինք.
— Էլ ի՞նչ քէֆ, էլ ի՞նչ ուրախութիւն:
Հայ, նա-նա, հայ, նա-նա-նա:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ.

Իմ շապիկը Գանջու թել է,
Շատ *քրանելուց ցափ փթել է.

Ախ, իմ շապիկ,
Վախ, իմ շապիկ,
*Միսս բաց է,
Ջան, իմ շապիկ:

Կուրծք-օձիքդ խտակ խառ է,
Կարիդ թելը բարակ կաղ է:

Այ, իմ շապիկ,
Կարմիր շապիկ,
Ի՞նչ շուտ եղար
Ծըւիկ, ծըւիկ:

Օխոր աարի քեզ հագել եմ,
Էս *մարմի/նս *ալարակել եմ:

Ախ, իմ շապիկ,
Ջան, իմ շապիկ,
Էլ ո՞նց հագնեմ
Ես քեզ հիմիկ:

Յակ. Աղաբար.

ԳՐԱԽՈՐ.

Հաց կայ, բերան չկայ.

Բերան կայ, հաց չկայ:

Հաց կայ, ընդ ուտող չկայ. ուտող կայ,
ընդ հաց չկայ: Ուտող բերան:

Մարդ կայ՝ հազար արժէ,

Մարդ կայ՝ մէկ չարժէ:

Մարդ կայ, որ հազար արժէ, մարդ կայ, որ
մէկ էլ չարժէ: Սաղն ինչ իմանայ՝ կաղն ինչ է:
Սաղն ինչ իմանայ, թէ կաղն ինչ է:

Ով տեսաւ, զարմացաւ:

Ով տեսաւ, նա զարմացաւ:

Ինչ կուգես՝ արա:

Ինչ կուգես, այն արա:

Ընտրիր՝ որը որ կուգես:

Որը որ կուգես, այն ընտրիր:

Շապիկս կը մաշեմ, շապիկդ կը մաշես,

շապիկը կը մաշէ:

Շապիկս չեմ մաշի, շապիկդ չես մաշի,

շապիկը չի մաշի:

15.

«ՀԱՐՍԱՆԻՔԻ ԵՐԳԵՐ»

ԲԱՆԱԽՈՐ.

«Գնացէք տեսէք, ով է կերել այգին:»

Գնացին տեսան—այծն է կերել այգին.

Այծն ու այգին—

— — —
ձեզ բարեկենդան,
մեզ բարի Զատիկ:

«Գնացէք տեսէք, ով է կերել այծին:»

Գնացին տեսան—գայլն է կերել այծին.

Գայլն ու այծը, այծն ու այգին—
ձեզ բարեկենդան,
մեզ բարի Զատիկ:

«Գնացէք տեսէք, ով է կերել գայլին:»

Գնացին տեսան—սուրն է կերել գայլին.

Սուրն ու գայլը, գայլն ու այծը, այծն ու այգին
—ձեզ բարեկենդան,
մեզ բարի Զատիկ:

«Գնացէք տեսէք, ով է կերել սուրը:»

Գնացին տեսան—ժանգն է կերել սուրը.

Ժանգն ու սուրը, սուրն ու գայլը, գայլն ու այ-
ծը, այծն ու այգին— — —
ձեզ բարեկենդան,
մեզ բարի Զատիկ:

«Գնացէք տեսէք, ով է կերել ժանգը:»

Գնացին տեսան—իւղն է կերել ժանգը.

Իւղն ու ժանգը, ժանգն ու սուրը, սուրն ու գայ-
լը, գայլն ու այծը, այծն ու այգին—
ձեզ բարեկենդան,
մեզ բարի Զատիկ:

«Գնացէք տեսէք, ով է կերել իւղը:»

Գնացին տեսան—մուկն է կերել իւղը.

Մուկն ու իւղը, իւղն ու ժանգը, ժանգն ու սու-
րը, սուրն ու գայլը, գայլն ու այծը, այծն ու
այգին— — —
ձեզ բարեկենդան,
մեզ բարի Զատիկ:

«Գնացէք տեսէք, ով է կերել մկան:»

Գնացին տեսան—կատուն է կերել մկան.

Կատուն ու մուկը, մուկն ու իւղը, իւղն ու ժան-
գը, ժանգն ու սուրը, սուրն ու գայլը, գայլն ու
այծը, այծն ու այգին— — —
ձեզ բարեկենդան,
մեզ բարի Զատիկ:

«Գնացէք տեսէք, ով է տարել կատուն:»

Գնացին տեսան—հարսն է տարել կատուն.

Հարսն ու կատուն, կատուն ու մուկը, մուկն ու
իւղը, իւղն ու ժանգը, ժանգն ու սուրը, սուրն
—

«Աչակ. Այր.»

ու գայլը, գայլն ու այծը, այծն ու այգին—
ձեզ բարեկենդան,
մեզ բարի Զատիկ:

«Գնացէք տեսէք, ով է տարել հարսին»:
Գնացին տեսան—փէսէն է տարել հարսին:

Փէսէն ու հարսը, հարսն ու կատուն, կատուն ու
ու մուկը, մուկն ու իւղը, իւղն ու ժանգը, ժանգն
ու սուրը, սուրն ու գայլը, գայլն ու այծը, այծն
ու այգին— — — — — ձեզ բարեկենդան,
մեզ բարի Զատիկ:

ԸՆԹԵՑԱՆՈՒԹԻՒՆ.

Կրպօն խփէ, խեպօն խաղայ,
Ակլէ տիւկլէ տնազ է,
Էծիկ մէծիկ բզէզ է,
Օֆ, տիւֆ, նաղարայ,
Հար, բաբա, հարիսա.
Քաթիպի կօճակ,
Պինդ ֆօլօճակ,
Ճրթ, պրթ:

ԳՐԱՒՈՐ.

Կրպօ, խեպօ, օֆ.

Զօրք, զօր/ութիւն, զօր/եղ, զօր/աւոր, զօր/
անալ, զօր/ահանդէս, զօր/ապետ, ան/զօր մեծա/
զօր, հ/զօր:

Սէր, սիր/ելի, Սիր/աւան, ընկերա/սէր, ջա-
նա/սէր:

Երախտա/գէտ, տ/գէտ, գրա/գէտ, հնարա-
գէտ, ան/գիտ/ակ:

Տնա/շէն, քարա/շէն, շէն անալ, շէն գիւղ,
շէն տուն:

Գէշ (վատ), գէշ անալ, գէշ/ութիւն:

Գէշ (լէշ), գիշ/ատիշ:

Մայր—մէր, սանամէր. հայր—հէր. եղբայր
—ախպէր. վայր ընկնել—վէր ընկնել. գայլ—
գէլ. ծայր—ծէր. ձայն—ձէն. երեխայք—երե-
խէք. այծ—էծ. այս, այդ, այն—էս, էդ, էն:
Յոյս, յուս/ալ, յուս/ահատութիւն, Յուս/իկ,
ան/յոյս:

Արձակ, համ/արձակ, ընդ/արձակ, արձակ/ել.
յարձակ/վիլ:

Բարձ, բարձ/ել, համ/բարձել, Համ/բարձում:
Գոհ, գոհ/ութիւն, գոհ/գոհ:

16.

«Զ Ր Ա Ղ Ա Յ»

ԲԱՆԱԻՈՐ.

Վերին տախտակ՝ Թրխկ Թրխկ,
Ցածրի տախտակ՝ վրխկ վրխկ,
Մէջն է տուտուց տուտուտուգ,
Տրկի բերան վրգ վրգ:

ԳՐԱՒՈՐ.

Ջրաղացի համար ասում են.

Տրտինգ կանի դամաճ դամաճ,
Աշխարհ կուտի կամաց կամաց:

Նրա քարերի համար էլ ասում են.

Երկու սար,
Կրծում են իրար:

Փշրանք, զրկանք, լուտանք, մաղթանք, ա-
ղաչանք, պաղատանք, արհամարհանք, զգուանք,
տականք, տանջանք, չարչարանք:

Ծուռումուռ, հաց մաց, բարբառ, սարսուռ,
արհամարհանք, սպառսպուռ, պէսպիսութիւն,
սուսուսիւս, ծփծփալ, չափչփել, խաղխղել, թափ-
թրփել, գլխէլգլուխ:

Հանելուկ, բազուկ, տաքուկ, փափուկ, տըզ-
րուկ, ջրջրուկ, հեղուկ, մանուկ, հարցուկ, շշուկ,
յատուկ, կապուկ:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ.

Մի տուն ունինք, տան նման չի.
Գետի ափին, մեծ ժայռի տակ,
Կրկրգած է մէնը-մէնակ:
Գիշեր ցերեկ բայդուշի պէս
Ձայն է հանում, գոռում այսպէս—

Թըր՛խկ, չըր՛խկ,
Վը՛շտ, ճը՛շտ...

Առուն բարձրից ցած է թռչում,
Պատը ծակում, միջովն անցնում:
Յատակումը դրդոց է,
Շրրմփոց ու թրրբխկոց է:
Տան մէջ երկու ուժեղ գազան,
Մինը տակին՝ միւսը վրան,
Առիւծի պէս մռնչում են,
Իրար ըրեխ կրծոտում են...
Մրանք մարդ չեն, ոչ արջ, ոչ գայլ,
Ինչ էլ որ տաս, քիչ է դարձեալ,
Հարամի են իսպառ քաղցած,
Էլ չեն լսում ոչ խօսք, ոչ լաց:
Դուրս են մղում իրանց փորից
Կերակուրը, փռի դարձած...

Այժմ ասէք, այդ ի՞նչ տուն է,
Որ մինչ այսօր էլ կանգուն է:

Այ. Արարատեան.

17.

«Կ Ա Ձ Ա Ղ Ա Կ»

ԲԱՆԱԻՈՐ.

Խօջան եկաւ,
Գաղը ետքին:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ.

Այ չաչանակ
Կաչաղակ,
Սիրուն թռչնակ,
Մարտարակ,

Ի՞նչ ես ընկել դռնէ դուռ,
Բագ ու պարտէզ ու կտուր.
Եւ մտքումդ էդ ի՞նչ կայ:

Քանի՞ ճշտս,
Կըչ-կըշտս—
«Չկա-չկա»,
Չկա, չկա...

Մէկ էլ յանկարծ
Ձայրացած,
Աւելի խիստ,
Անհանգիստ,

Երկար պոչովդ շարժելով,
Ի՞նչ ես բացում կտուցդ
Եւ վրդոված հոգուցդ

Ձայն ես տալի
Վշտալի—

«Ձկն-չէ, չէ
Ձկն-չէ, չէ...»

Յակ. Աղաբաբ.

ԳՐԱԻՈՐ (թելադրել).

ԳՈՐԾՆԵՐԻ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

«Քեռին մեռել է, քեռին մեռել,
մեռել է, մեռել է»:

— Ե՞րբ, երբ, երբ:

«Մէ...կէ...կէլ օրը, մէկէլ օրը»:

— Ղորթ, ղորթ, ղորթ:

Արտագրել տալ.

Ճըլվըստ, ճըլվըստ, ճախարանկ.
Ես հաստ մանեմ, դուք՝ բարակ,
Ես մեղր ուտեմ, դուք՝ կարագ.

Շատ մանողին շալ շալիկ,

Քիչ մանողին չիթ շալիկ:

Յար. Թուամանեան.

18:

«Ա Ի Ա Գ Մ Կ Ն Ի Կ»

ԲԱՆԱԻՈՐ.

Հողէ լուլա,

Մսէ գիւլլա,—

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ.

Աւագ մկնիկ խաթունը լեշաքը քաշեց
գլխին և գնաց: Ճանապարհին ով պատահեց,
հարցրեց. «Խէր ըլի, աւագ մկնիկ, այդպէս
շտապով ուր ես գնում»: Նա ամէնին էլ
պատասխանեց. «Գնում եմ մարդ ճարելու»:

Ամէնքն էլ ասացին. «Գնա, Աստուած յա-
ջողի»:

Գնաց, գնաց, վերջապէս թագաւորի աք-
լարը թռաւ եկաւ առաջը և ասաց. «Խէր
ըլի, աւագ մկնիկ, այդպէս շտապով ուր ես
գնում»:

— Խէր բարին վրէժ ըլի, գնում եմ մարդ
ճարելու:

«Արի, ինձ առ»:

— Ինձ ինչո՞վ կը պահես:

«Կտուցովս»:

Մէկմէկու հաւանեցին, գնացին եօթն
օր, եօթը գիշեր հարսանիք արին, պսակվե-
ցան:

Հարսանիքը պրծան. աքլարը գնաց քճէճ
անելով դարձում ճարելու, աւագ մկնիկն էլ
մտաւ թոնիր, որ վառի: Թոնրի կրակը կը-
պաւ, աւագ մկնիկը մնաց թոնրի մէջ, ե-
ղաւ ճրժտիկ-վրժտիկ:

Աքլարը երեկոյեան տուն եկաւ, տեսաւ
որ աւագ մկնիկն ընկել է թոնիրը, եղել է
ճրժտիկ-վրժտիկ: Գնաց կատարը կտրեց,
մոխիր ցանեց գլխին ու նստեց:

Կաշաղակն եկաւ, տեսաւ, ասաց. «Աք-
լարիկ, դու ինչո՞ւ ես կատարկորիկ, մոխ-
րաթաթախ»:

— Օհ, աքլարիկ կատարկորիկ, մոխրա-
թաթախ. աւագ մկնիկն ընկաւ թոնիր, ե-
ղաւ ճրժտիկ-վրժտիկ:

Կաշաղակի փետուրները թափվեցան.
գնաց նստեց ծառի վրէն:

Ծառիկն ասաց. «Կաշաղակիկ, դու ինչու ես թեթափիկ»:

— Օհ, կաշաղակիկ թեթափիկ, աքլարիկ կատարկտրիկ, մոխրաթաթախ. աւազ մկնիկն ընկել է թոնիր, եղել է ճրժտիկ-վրժտիկ:

Ծառը կոտորվեցաւ, ընկաւ քարի վրա:

Քարն ասաց. «Ծառիկ, դու ինչու ես ճղա/կոտոր»:

— Օհ, ծառիկ ճղակոտոր, կաշաղակիկ թեթափիկ, աքլարիկ կատարկտրիկ, մոխրաթաթախ. աւազ մկնիկն ընկել է թոնիր, եղել է ճրժտիկ-վրժտիկ:

Քարը գլորվեց, գնաց ծովը:

Ծովն ասաց. «Քարիկ, դու ինչու ես գլոր-մլոր»:

— Օհ, քարիկ գլոր-մլոր, ծառիկ ճղակոտոր, կաշաղակիկ թեթափիկ, աքլարիկ կատարկտրիկ, մոխրաթաթախ. աւազ մկնիկն ընկել է թոնիր, եղել է ճրժտիկ-վրժտիկ:

Ծովն էլ մէկէնմէկ բրորաւ:

Հովիւը նորա դէմ ելաւ և ասաց. «Ծովիկ, դու ինչու ես բրոր-մրոր»:

— Օհ, ծովիկ բրոր-մրոր, քարիկ գլոր-մլոր, ծառիկ ճղակոտոր, կաշաղակիկ թեթափիկ, աքլարիկ կատարկտրիկ, մոխրաթաթախ. աւազ մկնիկն ընկել է թոնիր, եղել է ճրժտիկ-վրժտիկ:

Հովիւն այս որ լսեց, ոչխարներն անտէր թողեց, սուգ անելով գնաց. Մաքին *մկկալով ետնն ընկաւ, մխիթարեց, թէ

«դարդ մի արա», դարձրեց բերեց, եօթն անգամ պտտեց ոչխարների բոլորը և ասաց.

«Աւազ մկնն կողի վրա,
աւազ մկնն կողի վրա,
աւազ մկնն կողի վրա»,

այսինքն, թէ «դուք ողջ լինէք, թող կատուն դարդ անէ»:

ԳՐԱՆՈՐ.

Խաթունը գնաց էրիկ ուղեւուն:

Բախտը բերաւ, լաւ մարդ դատաւ:

Մարդը դադում էր, կինը կառավարում էր:

Յանկարծ խաթունը ճրժտիկ-վրժտիկ եղաւ:

Արեգակը սևացաւ, ամէնքը սգոտորեցան. էլ ո՛վ մնաց, որ չմղկտաց: Մաքին մեկըկաց, թաղեց մկնն, մեր աւազ մկնն:

Էն հանաքին ինչ ասեմ: որ կէսը դարթ չէ: Մուկը ծակը չէր մտնում, ցախ աւելն էլ պոչիցը կապեցին: Կատուի խրոխրուալը մկնն հոգեհանգիստ է:

19.

«ԱՅԲՈՒԲԵՆԸ»

ԲԱՆԱԴՐ.

ա ե է ը ի ու ո կամ օ

ա բ գ դ ե զ է ը թ ժ

Դմբեմ, Զոխին, Տաղիւր, Եսիր, Սախաւա, Զոլոր, Ուկի՛ն:

ԳՐԱԻՈՐ.

Գիժ տղի բանաստեղծութիւնը լսեցէք.

Այբ, Բեն—գլխիդ դմբեմ:

Գիմ, Դա—Նոխիս հագիր ա:

Եչ, Զա—կաց ու հագնա:

Է, Եթ—խաղա մնաց եդ:

Թո, Ժէ—մէկ բանի չաժէ:

Ինի, Լիւն—իծանս եկան տուն:

Խէ, Ծա—կարդացողն էժ ա:

Կեն, Հո—եսիր չեմ հո:

Զա, Ղատ—մնացել եմ սախատ:

Ճէ, Մէն—ամէն, քոռանայ ով ձեռք չի վերց-
նի մեզմէն:

Յի, Նու, Շա, Ո, Զա, Պէ, Ջէ, Ռա—սոված
մեռայ:

Սե, Վե, Տիւն, Բէ—ծանր է:

Յո, Հիւն, Փիւր, Բէ—իշի քուրք է:

Օ, Ֆէ—ովվէհ, գլուխս տոռաքեցաւ:

Խաչ, Աքովիան.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ.

Եկան, գայլի ձագը բռնեցին ու տարան,
գիրքն առաջ դրին, որ կարդայ, ուսում
առնէ:

Ասացին. «Ասան ալը»: Ասաց. «Այժ, փո-
րիս դեղ է»:

Ասացին. «Ասան քեն»: Ասաց. «Բադ, ե-
րանի տեղն իմանամ, բռնեմ բադը:

Ասացին. «Ասան զիմ»: Ասաց. «Գառը,
լաւ գիտեմ դրա համը»:

Ասացին. «Ասան դա»: Ասաց. «Դմակ, հա-
անուշ դմակ»:

Ասացին. «Ասան նշ»: Ասաց. «Ես ԵՊ, ե-
զր մի քիչ գօրեղ է, բայց նրա միսն էլ հա-
մեղ է»:

Ասացին. «Ասան զա»: Ասաց. «Զարնեմ,
զենեմ, մորթեմ, քերթեմ, լափեմ»:

Ասացին. «Ասան է»: Ասաց. «Էշն էլ գէշ
է, էն էլ կուտենք»:

Ասացին. «Ասան ըթ»: Ասաց. «Ը, ըն-
տանի կենդանի, ամէնն է պիտանի. ուղտ,
ծի, շորի, հորթ ու կովը թող ճանապարհը
մոլորի, իմ ճանկն ընկնի»:

Ասացին. «Ասան թո»: Ասաց. «Թճ-թճ,
մոռացել եմ ոչխարը, թող մի պատահի,
տես քնց կը գըզգընմ»:

Հէնց որ ասացին. «Ասան ժէ», տեղից
վեր թռաւ, թէ «Ժամանակ չունեմ, շուտ
արա, հէր օրհնած. հրէն ոչխարի հօտը անց-
նում է. իմ քնչ բան է սյր-մէ-մէ-ուս, ես հօ
բաղցած մեռայ»:

20.

«ԱԶԵՏ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁ»

ՀԱ. ԴԱՆ-ԴԱՆ

Ճոճը ծառէն գցած է,
Բեխէս մէջը քնած է,
Վարդն երեսին փռած է,
Ծուծուկ, ծուծուկ քրտնած է:

..

Դիմաց մորի ես, բեխա,
Շէկ շորի ես, բեխա,
Հօրը մուշտակ ես, բեխա,
Մօրը շուշտակ ես, բեխա:
Բաղ ու բախշա ես, բեխա,
Ծալած բոխշա ես, բեխա:
Աստծու տունը շէն կենայ.
Հա դան դանի, դանդանի:

Բամակունց Ա.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱԽՊԵՐԸ

Արի գնանք, եզր ջան,
Համ վար անենք, համ էլ ցան,
Աշխատանքի օրերը
Հրէս եկան, մօտեցան:

Գուժանը դու կը բաշես,
Մաճկալդ էլ կըլեմ ես:
Էն գլխիցըն էս գլուխ
Էս փեշակն է պահել մեզ:

Յ. Աղաբաբ.

Մ Ա Ս Տ Ա Ն Ը

(այծ)

Կըտի-կըտի Մաստանը,
Կըտիկը մտաւ բոստանը:
Ոտով մարգը տրորեց,
Գլխով հորը փորփրեց.
Ծուլ-ծուլի վեր ելաւ,
Իր պոչի հետ խաղ արաւ:
Բոստանչին էլ դուրս թռաւ,

Չար այծիկին ձեռք առաւ.
Տըւեց, տըւեց, տուր-տըւեց,
Ջանը վրէն քըրքըրեց.
Քամուն տըւեց մագերը,
Տեղից հանեց պողերը,
Հանած պողերի տեղը
Լըցըեց աղ ու տաքդեղը:
Քոլիկ դարձաւ Մաստանը,
Էլ չէր մանուլ բոստանը:

Ա. Խնկոյեան.

Ծ Ի Տ Ը

Ծընգը, մընգը,
Փուշիկ տուի, լօշիկ առայ,
Լօշիկ տուի, գառնիկ առայ,
Գառնիկ տուի, հարսիկ առայ,
Հարսիկ տուի, սագիկ առայ,
Սագիկ առայ, աշուղ դառայ,
Ծընգը, մընգը,
Ծիւ, ծիւ:

Յովհ. Թումանյան.

Բ Ա Ռ Ս Խ Ա Ղ

Պօղոսն ու Պետրոսը բառախաղի էին տա-
լիս: Պօղոսը վարժված էր, իսկ Պետրոսը
չէր սովորում:
Ահա թէ ինչպէս էին խաղում:
Պօղոս. Պետրոս, տառ տառ:
Պետրոս. Տունը:



— Քեզ կծի շունը: Ասան դուռը:

— Դուռը:

— Ընկնիս ջուրը: Ասան պաս:

— Պաս:

— Ուտես թանէ սպաս:

— Էլ չեմ ասում. հիմի ես կը հարցնեմ

քեզ:

— Լաւ, հարցրու:

— Ասա ծիտ:

— Ծիտ:

— Ուտես մախոխ:

— Այդ չեղաւ, Պետրոս: Ես ասում եմ ծիտ, դու ասում ես մախոխ. ի՞նչպէս կարելի է. տեսնում ես նման չես:

Ղ. Ազադեան.

ՊՍՏԻԿՆ ՈՒ ԼԽՏԻԿԸ

Դաշտի մուկը հսկայ ու չափ,
Ագին երկար, ինքը զօջաղ,
Մօտենալով մի օր մի տան,
Տեսաւ պատիկ վտիտ մըկան.
«Պան, քո տունը Աստուած շինի,
Էդպէս պատիկ մուկ կը լինի...
Էդքան նիհար, հալից ընկած
Աշխարհումս դեռ չի եղած:
Հարուստ տան մէջ տաք ամբարում
Քաղաւորի կեանք ես վարում.
Ուտում ես միշտ կարագ ու եղ,
Կրծում շաքար ու նուշ համեղ:
Իսկ ես խոպան, ցուրտ դաշտերում
Հազիւհազ եմ ապրուստ ճարում.
Բայց տես, քեզնից մեծ եմ, հսկայ,
Ինչպէս լիտիկ՝ էլ մուկ չկայ...»
«Մի պարծենար, իմ աչքի լիս,
Մէկ նայիր, թէ փ է գայիս»:

Նայեց էն կողմ դաշտի մուկը,
Տեսաւ կատուին—ցամքեց թուրքը:
Պատիկ մուկը իսկոյն փախաւ,
Իր նեղ բնում շուտ թագ կացաւ.
Շատ աշխատեց լիտիկ մուկն էլ,
Բայց չկարաց ծակը մտնել:


Կատուն վաղեց կաղլիկ-կաղլիկ,
Բռնեց դաշտի մըկան չաղլիկ:
«Բանջի, կանչեց տան մըկնիկը.
Պատիկն է լուս, թէ լիտիկը...»

Յար. Թումանյան.

ՀՀ Ազգային գրադարան



NL0249481



334

Յ Ա Ն Կ

(Աղակերտական մասի).

	Երես
Յառաջարանի ձև	5
Գրութեան ձևեր	9—24
Ընթերցանութեան մասերիկ	
1. Առաւօտ	27
2. Գաթան ու փախլձուր	—
3. Նապաստակ	28
4. Այսօր անձար	—
5. Տուռչ ճուռեր	29
6. Մեղր ուտողի հէքիաթը	32
7. Արև	34
8. Կատու	35
9. Սերմանացան	37
10. Խելք ու միտքը խաղերին տուած հարսիկը	38
11. Ծաղկաքաղ	39
12. Ծննդուկ	40
13. Առիւծի դատաստանը	42
14. Քաղցած մարդու հանաքները	46
15. Հարսանիքի երգեր	48
16. Զրաղաց	51
17. Կաշաղակ	53
18. Աւազ մկնիկ	54
19. Այբուբենը	57
20. Ազատ ընթերցանութեան փորձ	59